Ցանկ

2014 թվականին պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող միջոցառումների

N	Միջոցառման անվանումը	ժամանակը	Պահանջվող գումարը /հազ. դրամ/	Ծանոթություն
1	Սուրբ զատիկին նվիրված միջոցառում	1-ին եռամսյակ	350	Միջոցառումը կազմված է երք մասից՝ շարդրությունների մրցույթ, նկարչական մրցույթ և տոնին նվիրված թատերականացված միջոցառում: Ակնկալվում է դպրոցականների, մանկատան սաների, ուսանողների ակտիվ մասնակցություն: Շարադրությունների և նկարչական մրցույթների հաղթողները կպարգևատրվեն հուշանվերներով և պատվոգրերով: Միջոցառումը կլուսաբանվի մարզային լրատվամիջոցներով
2	Պատանի դաշնակահարների մարզային փառատոն	2-րդ եռամսյակ	400	Փառատոնը նախատեսված է մարզի երաժշտական, արվեստի դպրոցների սաների համար: Այն կանցկացվի երկու փուլով՝ ներդպրոցական և մարզային: Կանցկացվեն վարպետության դասեր, կտպագրվեն պաստառ, աֆիշաներ, բուկլետներ, դիպլոմներ, հաղթողները կստանան հուշանվերներ: Եզրափակիչ փուլը կցուցադրվի մարզային հեռուստատեսությամբ:
3	<<Բարբառների երկխոսություն>> մարզային փառատոն	2-րդ եռամսյակ	550	Մասնակիցները կազմկոմիտեին կներկայացնեն իրենց տարածքին բնորոշ բարբառներով համաշխարհային գանձարանից մեկ հեքիաթ: Կտպագրվեն պաստառ, աֆիշաներ, բուկլետներ՝ մասնակիցների նկարներով, դիպլոմներ, հաղթողները կստանան հուշանվերներ: Եզրափակիչ փուլը կցուցադրվի մարզային հեռուստատեսությամբ:

4	Ազգային խաղեր	2-րդ – 3-րդ եռամսյակ	400	Կկազմակերպվի ազգային խաղերի ցուցադրական ելույթներ մարզի տարբեր համայնքներում՝ ներգրավելով դպրոցների սաներին: Կտպագրվեն բուկլետներ, միջոցառումը կլուսաբանվի մարզային հեռուստատեսությամբ:
5	<<Մշակութային Գեղարքունիք>> պարարվեստի մարզային փառատոն	3-րդ եռամսյակ	400	<<Մշակութային Գեղարքունիք>> պարարվեստի մարզային փառատոնը կոչված է իրականացնելու ՀՀ կառավարության ընդունած գերակայությունները արվեստի և մշակույթի ոլորտում, մասնավորապես հայկական ժողովրդական և ազգային պարերի ներկայացումն ու տարածումը, հայրենասիրական ոգու բարձրացումը, մարզում գործող տարբեր պարային համույթների փորձի փոխանակմանը: << Մշակութային Գեղարքունիք >> պարարվեստի մարզային փառատոնին կմասնակցեն մարզի տարբեր համայնքների հանրակրթական դպրոցների, արվեստի դպրոցների սաներ, մշակույթի պալատներին կից պարային համույթները: Փառատոնը կանցկացվի երկու փուլով՝ տարածքային և մարզային: Տարածքային ժյուրիների կողմից ընտրված լավագույն երկու պարային համույթներ կմասնակցեն մարզային փուլին,որը նախատեսվում է անցկացնել <<Քյավառ>> հեռուստաընկերության հետ համատեղ /մասսայականությունը ապահովելու նպատակով/:
6	ՀՀ անկախության տարելիցին	3-րդ եռամսյակ	500	Կկազմակերպվի մարզամշակութային միջոցառումներ՝ նվիրված ՀՀ

	նվիրված տոնահանդես			Անկախության 23-ամյակին
7	Մշակութային երկխոսություն	4-րդ եռամսյակ	450	Փորձի փոխանակման, մարզին բնորոշ արվեստը ներկայացնելու նպատակով, նախատեսվում է կազմակերպել փոխայցելություններ Հայաստանի Հանրապետության այլ մարզեր: Հանդես կգան պարային համույթներ, երգիչ- երգչուհիներ, կցուցադրվեն արվեստի և գեղարվեստի դպրոցների սաների ձեռքի աշխատանքները:
8	Մշակութային տարվա ամփոփում	4-րդ եռամսյակ	228,2	Տարեվերջին կազմակերպել 2014 թվականին մշակույթի ոլորտում հաջողությունների հասած մշակույթի գործիչների հավաք՝ մեծարելու և խրախուսելու նպատակով: